ԿԱՐԾԻՔ

ՖՐԻԴԱ ՀՄԱՅԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ԺԳ. 00.01 «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այսօր կրթությունը ընդունվում է որպես մարդու, հասարակության և պետության զարգացման գործընթացում առաջընթաց ապահովող չափանիշային համակարգի առանցքային բաղադրիչ: Սոցիալ-տնտեսական և հասարակական պայմաններում ավելի ու ավելի է կարևորվում նոր աշխատաշուկայի, տնտեսական զարգացման համաշխարհային պահանջներին ինտեգրումը և այս համատեքստում կարևորվում են կրթական համակարգի կատարելագործումը, կրթության որակի բարձրացման, մանկավարժական կադրերի պատրաստման և կատարելագործման գործընթացները:

Սույն ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում կրթության համակարգում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունների ուսումնասիրմանը և սույն գործընթացներում առկա հիմնախնդիրների լուսաբանմանը: Հեղինակն իր «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում» խորագրով աշխատանքում ներկայացրել է ՀՀ մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում առկա թերությունները, դրանց բարելավմանն ուղղված գործողությունների ռազմավարությունը:

Գնահատելի է, որ սույն հետազոտության բնագավառն իրապես նոր է, խնդիրները հիմնավոր, հետազոտության շրջանակները՝ կոնկրետ: Ֆրիդա Հակոբյանի ատենախոսության թեմայի՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում» ընտրությունը համահունչ է մանկավարժական գիտության զարգացման միտումներին: Եթե հաշվի առնենք նաև վերջին տասնամյակում հանրակրթական դպրոցներում մանկավարժական գործընթացի կատարելագործման տեմպերը, քննարկվող հարցերն ու հիմնախնդրի շրջանակները, ապա թեմայի արդիականությունը և հրատապությունը հիմնավորվում են անմիջապես: Միաժամանակ գովելի է ատենախոսի մասնագիտական մոտեցումները և սկզբունքայնությունը հետազոտության շրջանակների ընտրության հարցում: Ատենախոսը հետազոտվող հարցի տեսական հիմքերը ներկայացրել է

մասնագիտական գրականության վերլուծության զուգընթաց, ձևավորել վարկած, դուրս բերել հիմնախնդիրները, որոնց լուծումները տրված են հետազոտության մեջ:

Ֆրիդա Հակոբյանն ուսումնասիրել է մեծ քանակությամբ գրականություն՝ 124 անուն գիտական գրականություն և 42 էլեկտրոնային աղբյուր, դուրս է բերել դրույթները, որոնց հիման վրա, հետզհետե կոնկրետացնելով հարցերն ու նեղացնելով շրջանակները, ձևավորել է հետազոտության հիմնական դրույթները:

Ներածության մեջ բավականին հստակ են ձևակերպված նպատակը, խնդիրները, օբյեկտն ու առարկան, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ատենախոսության և՛ կառուցվածքը, և՛ բովանդակությունը հաստատում են, որ Ֆրիդա Հակոբյանը ճիշտ է ընտրել հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը: Ատենախոսության և՛ լեզուն, և՛ ոճը համապատասխանում են գիտական հետազոտության առաջադրվող հիմնական պահանջներին:

Ֆրիդա Հակոբյանն իր «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում» խորագրով աշխատանքում բավականին խորը ուսումնասիրել և վեր է հանել մանկավարժական մասնագիտական ներուժի հայեցակարգային դրույթները. ատենախոսը վեր է լուծել ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացները կարգավորող օրենսդրական դաշտը, սահմանել է **«մանկավարժական մասնագիտական ներուժ» եզրույթը**՝ որպես բազմաբաղադրիչ և դինամիկ իրողություն, ուսումնասիրել և վեր է լուծել մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներին առնչվող 2008-2018թթ. վիճակագրական ցուցանիշներ:

Ատենախոսը, տիրապետելով բնագավառի գիտական նորույթներին և մշակումներին, կարողացել է գիտական պատշաճ մակարդակով գնահատել ոլորտում առկա իրավիճակը, իրավիճակի օբյեկտիվ գնահատման արդյունքում բացահայտել է ոլորտում առկա հակասությունները, թերություններն ու բացերը և իր տեսանկյունից ներկայացրել դրանցից ամենացայտուններն ու հիմնարարները:

Դրվատանքի է արժանի նաև այն, որ Ֆրիդա Հակոբյանը համակողմանիորեն ուսումնասիրել և ներկայացրել է մանկավարժական կրթության հիմնական միտումները. այն է շարունակական կրթություն, կրթության հումանացում, ուսումնական հաստատությունների միջև համագործակցություն, նորարարություն, մանկավարժական մասնագիտական ծրագրերի արդիականացում, շարունակական մանկավարժական պրակտիկայի կարևորություն և այդ գործընթացի հետևողական մոտեցում, պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական վերապատրաստում, նյութատեխնիկական բազայի կատարելագործում, հայալեզու որակյալ մասնագիտական գրականության ստեղծում և այլն:

Առավել ուշագրավ է ատենախոսության հետազոտության նախապատրաստման փուլը, որտեղ հիմնավոր ձևակերպված են հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը, դիագնոստիկական և կանխատեսման, մանկավարժական մշտադիտարկման և շտկման միջոցները և արդյունքները:

Ֆրիդա Հակոբյանը հարցում է իրականացրել ուսուցիչների շրջանում՝ բացահայտելու ՀՀ մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները. մշակել է սույն հիմնախնդիրների լուծմանն ուղղված **գործողությունների նոր պլան:**

Ատենախոսը հաջողված բովանդակային ձևաչափով կարողացել է մշակել և հետազոտությամբ հիմնավորել **մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության դինամիկ մոդել,** որն իր մեջ ներառում է ուսուցիչների մասնագիտական պատրաստման և զարգացման քայլեր, պետական քաղաքականությանն առնչվող դրույթներ:

Բավականին հարուստ և գիտական խորը վերլուծություններով է աչքի ընկնում Ֆրիդա Հակոբյանի աշխատանքի հետազոտական մասը. հեղինակն անց է կացրել հարցում ուսուցիչների շրջանում. հարցումն իրականացվել է 432 ուսուցիչների՝ 24 արական, 408 իգական սեռի ներկայացուցիչների շրջանում. հեղինակն էմպիրիկ արդյունքների, օրենսդրության ուսումնասիրության, վիճակագրության ուսումնասիրության և վերլուծության տվյալների հիման վրա, բացահայտել է ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման, զարգացման առանձնահատկությունները, վեր է հանել ոլորտում առկա բացթողումները, այդ գործընթացներում առկա հիմնախնդիրները. կազմել է գործողությունների պլան՝ ուղղված առաջացած հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսի կողմից ներկայացրած դինամիկ մոդելն իր մանկավարժական պայմանների համալիրով կարող է նպաստել մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման ու զարգացման գործընթացների ակտիվացմանը և կատարելագործմանը: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել պետության կրթական քաղաքականության իրականացման, կրթական ծրագրերի մշակման գործընթացներում, նաև ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման աշխատանքներում, ինչպես նաև կարող են ներդրվել ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման և գիտահետազոտական աշխատանքներում:

Հետազոտության շարադրանքում տրամաբանական հաջորդականությամբ լուծված են նպատակով պայմանավորված խնդիրները, ապացուցված են հիմնադրույթները, հիմնավորված է գիտական նորույթն ու հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը զերծ չէ նաև որոշ թերություններից.

1. *Լավ կլիներ, եթե ենթագլուխների եզրակացություններն ավելի ընդգրկուն լինեին:*
2. *Աշխատանքի 3-րդ գլխի 2-րդ ենթագլուխը նպատակահարմար կլիներ միացվեր 3-րդ գլխի 3-րդ ենթագլխի բովանդակությանը:*
3. *Որոշ ձևակերպումներ, բառակապակցություններ երկարաշունչ են. դրանք վերանայման, հստակեցման և խմբագրման կարիք ունեն / էջ 8, 10, 20, 21, 24/:*

Սակայն նշված թերություններն էական չեն և չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը:

Եզրակացություն

Ֆրիդա Հմայակի Հակոբյանը միանշանակ իրականացրել է լուրջ, ինքնուրույն գիտական հետազոտություն: Նրա՝ «Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում» խորագրով ատենախոսությունն ավարտուն, գիտական ուսումնասիրություն է, այն ամբողջովին բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՄ՝

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ *ԱՐՈՒՍՅԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Արուսյակ Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ-Ի ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈՑԵՆՏ՝ *ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ*

09/IV-2021 թ.